



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

նոյեմբերի 2018 թվականի N°Ա  
ք. Երևան

**«Հ.Հ.Ն.Մ.Մ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հունվարի 30-ի N°19Ա որոշմամբ «Հ.Հ.Ն.Մ.Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Գողթանիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0485 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա) տասնհինգ տարի գործողության ժամկետով,

բ) ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N°1177Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Կայանի գործունեության ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Լիցենզիայում ամրագրված երեք հիմնական և մեկ պահուստային հիդրոագրեգատներից բացի Կայանում տեղակայված է լրացուցիչ հիդրոագրեգատ, ինչի վերաբերյալ Ընկերությունը նախապես չի տեղեկացրել Հանձնաժողովին, և նույն օրը նշված հանգամանքի վերաբերյալ կազմվել է արձանագրություն,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի հոկտեմբերի 15-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2018 թվականի հոկտեմբերի 24-ի N°18/05 գրությամբ Ընկերությունն ընդունել է խախտումը՝ հայտնելով, որ Կայանի լրացուցիչ հիդրոագրեգատը տեղակայվել է 2014 թվականին և ծառայել է որպես պահուստային՝ տարեկան առավելագույնը երկու ամսվա ընթացքում՝ ամենաթույլ ջրերի օգտագործման ժամանակ, որի հզորությունը կազմում է 70-140կՎտժ: Մինևույն ժամանակ

հայտնել է, որ Լիցենզիայում ամրագրված պահուստային հիդրոագրեգատը փոքր ջրաքանակների ժամանակ արդյունավետ չի գործել, քանի որ 50-60կՎտժ էլեկտրական էներգիա ստանալու համար օգտագործում էր մեծաքանակ ջուր, ուստի Ընկերությունը ձեռք է բերել և տեղակայել լրացուցիչ հիդրոագրեգատ՝ այն դիտարկելով որպես պահուստային հիդրոագրեգատին փոխարինող: Ընկերությունը խնդրել է նաև Լիցենզիայում կատարել փոփոխություն՝ Կայանում տեղակայված և Լիցենզիայի պայմաններով չամրագրված լրացուցիչ հիդրոագրեգատը դարձնել որպես պահուստային, ինչպես նաև հնարավորություն տալ մոտակա ժամկետում ապամոնտաժելու Լիցենզիայում ամրագրված պահուստային հիդրոագրեգատը,

ե) Լիցենզիայի պայմանների 6-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը Կայանում լիցենզավորված գործունեությունն իրականացնում է Լիցենզիայի հավելվածում նշված հիմնական սարքավորումներով, որոնց հաշվարկային հզորությունը կազմում է 1202 կՎտ,

զ) Լիցենզիայի պայմանների 28-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը լիցենզավորված գործունեությունը չի իրականացրել Լիցենզիայի պայմաններում նշված սարքավորումներով, և Լիցենզիայում ամրագրված երեք հիմնական և մեկ պահուստային հիդրոագրեգատներից բացի Կայանում տեղակայել է Լիցենզիայի պայմաններով չնախատեսված լրացուցիչ հիդրոագրեգատ՝ խախտելով Լիցենզիայի պայմանների 6-րդ և 28-րդ կետերը: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումներին՝ առ այն, որ պահուստային հիդրոագրեգատը արդյունավետ չլինելու պատճառով որպես փոխարինող տեղակայվել է լրացուցիչ հիդրոագրեգատ, որն օգտագործվում է տարեկան առավելագույնը երկու ամսվա ընթացքում, ապա հարկ է նշել, որ նշված հանգամանքը որևէ կերպ չի կարող ազատել Ընկերությանը լիցենզավորված գործունեությունը Լիցենզիայի պայմաններով ամրագրված սարքավորումներով իրականացնելու և դրանց փոփոխման պարագայում անմիջապես Հանձնաժողովին տեղեկացնելու պարտավորությունից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Լիցենզիայի պայմանների 6-րդ և 28-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից գործունեությունը համապատասխանեցնել Լիցենզիայի պայմաններին:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է.
  - 1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված խախտումը վերացնելուց հետո Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N°374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին համապատասխան դիմել Հանձնաժողով՝ Լիցենզիայի պայմաններում փոփոխություն կատարելու համար.
  - 2) սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**